Անկախ աուդիտորի եզրակացություն

«Փրիթի Ուեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակցին և ղեկավարությանը:

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Փրիթի Ուեյ» ՍՊԸ-ի ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 2023թ. դեկտեմբերի 31-ը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Փրիթի Ուեյ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտների (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» հատվածում: Մենք անկախ ենք Կազմակերպությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների՝ մեր աուդիտի համար կիրառելի վարքագծի պահանջների, և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն նշված պահանջների և ՀԷՄՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Crowe and Asatryans LLC
"Dom Moskvy" Business Center,
7, Argishti str., 2nd floor,
Yerevan, 0015, Armenia
T. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ
"Դոմ Մոսկվի" Բիզնես Կենտրոն,
Արգիշտի փող., 7, 2-րդ հարկ,
ք. Երևան, 0015, ՀՀ
Հ. +(374) 60 53 23 23
+(374) 99 54 33 88
E-mail: general@crowe.am
www.crowe.com

Crowe

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Կազմակերպության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Կազմակերպությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օրակներում գտնվող անձինք պատասխանատու են Կազմակերպության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական եզրակացություն, որը ներառում է մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը ամենաբարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական թերահավատություն: Ի լրումն՝

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ, կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- Ձեռք ենք բերում աուդիտին առնչվող ներքին հսկողության համակարգի մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու , և ոչ թե Կազմակերպության ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող բացահայտումների հիմնավորվածությունը:

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք , թե արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որը կարող է էական կասկած առաջացնել Կազմակերպության

անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդպիսի բացահայտումները համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Կազմակերպությանը դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգին վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Մենք կառավարման օղակներում գտնվող անձանց նաև տրամադրում ենք հայտարարություն, ըստ որի՝ մենք պահպանել ենք անկախության վերաբերյալ վարքագծի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք, ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալմեր անկախության վրա, և, որտեղ կիրառելի է, նախազգուշական միջոցառումների մասին:

Կառավարման օղակներում գտնվող անձանց հաղորդված հարցերից մենք որոշում ենք այն հարցերը, որոնք համալրվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում, և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Այս հարցերը նկարագրում ենք աուդիտի եզրակացությունում, եթե օրենսդրությամբ կամ իրավական ակտերով չի արգելվում տվյալ հարցի հրապարակային բացահայտումը, կամ, երբ խիստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի աուդիտորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացմամբ պայմանավորված հանրային օգուտը:

Այս աուդիտի առաջադրանքի պատասխանատու Ալբերտ Ասատրյանն է:

27 հունիսի 2024թ.

Ալբերտ Ասատրյան

Տնօրեն-բաժնետեր,
առաջադրանքի ղեկավար

Քրոու ընդ Ասատրյանս ՍՊԸ

ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն